

**Հայաստանի Հանրապետության կառավարության
և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև
«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև
առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին»
2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի
կիրարկման արձանագրություն**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լեհաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ցանկանալով որոշակիացնել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թ. ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի, այսուհետև՝ Համաձայնագիր, կիրարկման սկզբունքները, դրա 20(1) հոդվածին համապատասխան,
համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1
Ընդհանուր դրույթներ**

Սույն Կիրարկող Արձանագրությունը ներկայացնում է մանրամասն կանոններ Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև հարաբերությունների մասով: Սույն Կիրարկող Արձանագրության մեջ օգտագործված տերմինները և արտահայտությունները մեկնաբանվում են այնպես, ինչպես սահմանված են Համաձայնագրում:

**Հոդված 2
Իրավասու մարմինները**

1. Համաձայնագրի դրույթների կիրարկման համար պատասխանատու և միմյանց հետ ուղիղ համագործակցելու իրավասություն ունեցող՝ Կողմերի իրավասու մարմիններն են.

Հայաստանի Հանրապետության դեպքում՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը,

Լեհաստանի Հանրապետության դեպքում՝

Սահմանապահ պահակազորի գլխավոր հրամանատարը:

2. Կողմերի իրավասու մարմինները Համաձայնագրի 12(1) հոդվածում նշված՝ հետընդունման և տարանցման դիմումների ներկայացման, ինչպես նաև նման

դիմումներին պատասխանելու և Համաձայնագրի կիրարկման հետ կապված այլ նամակագրության համար, ուղիղ համագործակցության ապահովման նպատակով, նշանակում են կոնտակտային անձանց:

3. Իրավասու մարմինները սույն Կիրարկող Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից 14 օրացուցային օրվա ընթացքում միմյանց գրավոր կներկայացնեն իրենց կոնտակտային տվյալները և իրենց նշանակած կոնտակտային անձանց կոնտակտային տեղեկությունները:

4. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն իրավասու մարմինների անվան և նրանց իրավասությունների շրջանակի ցանկացած փոփոխության մասին:

5. Իրավասու մարմիններն առանց հետաձգման միմյանց գրավոր կտեղեկացնեն իրենց կոնտակտային տվյալների և իրենց նշանակած կոնտակտային անձանց կոնտակտային տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 3

Հաղորդակցության միջոցները

1. Հետընդունման և տարանցման դիմումները հիմնականում կներկայացվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետև՝ ՌՀԿԷՀ) միջոցով:

2. Հետընդունման և տարանցման դիմումների պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները կուղարկվեն հիմնականում ՌՀԿԷՀ միջոցով:

3. Անհրաժեշտության դեպքում հետընդունման ու տարանցման դիմումները և դրանց պատասխանները կարող են ներկայացվել փոստի, ֆաքսի կամ պաշտպանված էլեկտրոնային փոստի միջոցով:

Հոդված 4

Սահմանային անցակետերը

1. Համաձայնագրի 20(1)(ա) հոդվածի համաձայն՝ օդային ճանապարհով կատարվող հետընդունումը և տարանցումը կիրականացվեն սահմանային հետևյալ անցակետերում, եթե այլ բան համաձայնեցված չէ.

1) Հայաստանի Հանրապետությունում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում,

2) Լեհաստանի Հանրապետությունում՝ նրա տարածքում գտնվող բոլոր միջազգային օդանավակայանների սահմանային անցակետերում:

2. Հետընդունման նպատակով սահմանային այլ անցակետեր օգտագործելը կհամաձայնեցվի իրավասու մարմինների միջև՝ փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 5 **Լրացուցիչ միջոցները և փաստաթղթերը**

1. Հայցվող պետության իրավասու մարմնի ճանաչած բոլոր այլ փաստաթղթերը կհամարվեն լրացուցիչ միջոցներ և փաստաթղթեր, որոնք անուղղակի ապացուցում են, որ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանները բավարարված են:

2. Եթե Հայցող պետության իրավասու մարմինը համարում է, որ Համաձայնագրի 1-4 Հավելվածներում և սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերից բացի այլ միջոցները և փաստաթղթերը կարող են վերաբերելի լինել հետընդունման ենթակա անձի՝ Հայցվող պետության քաղաքացիություն ունենալը կամ հետընդունման հիմքերը որոշելու համար, նման փաստաթղթերը կամ միջոցները կարող են կցվել Հայցվող պետության իրավասու մարմնին ուղղված հետընդունման դիմումին:

3. Սույն Կիրարկող Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 14 օրացուցային օրվա ընթացքում, իրավասու մարմինները միմյանց գրավոր կտրամադրեն Համաձայնագրի 1-ին Հավելվածում նշված անձնագրերի և նույնականացման փաստաթղթերի ձևանմուշները:

4. Իրավասու մարմիններն առանց հետաձգման միմյանց գրավոր կտեղեկացնեն սույն հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերի ձևանմուշներում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 6 **Հետընդունման արագացված և տարանցման ընթացակարգերը**

1. Համաձայնագրի 7(3) հոդվածով և 11(2) հոդվածով (առաջին պարբերություն) նախատեսված հետընդունման արագացված ընթացակարգն իրականացվում է հետևյալ կերպ.

- 1) Համաձայնագրի 7(3) հոդվածի համաձայն՝ Հայցող պետության իրավասու մարմինը ՌՀԿԷՀ, անհրաժեշտության դեպքում նաև էլեկրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով Հայցվող պետության իրավասու մարմնին ներկայացնում է հետընդունման դիմում.
- 2) հետընդունման դիմումի «զ» կետը պետք է պարունակի տեղեկություն անձի փոխանցման առաջարկվող ամսաթվի և վայրի մասին.
- 3) Հայցվող պետության իրավասու մարմինը հետընդունման դիմումն ստանալուց հետո՝ 2 (երկու) օրվա ընթացքում, իր պատասխանում հաստատում է սույն կետի 2-րդ ենթակետում նշված պայմանների ընդունումը կամ առաջարկում է այլ պայմաններ.

4) Հայցվող կողմի իրավասու մարմինը պետք է պատասխանի Հայցող կողմի իրավասու մարմնի ներկայացրած դիմումին ՌՀԿԷՀ միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով:

2. Տարանցման դիմումները պետք է ներկայացվեն Հայցվող կողմի իրավասու մարմնին նախատեսված տարանցումից առնվազն հինգ (5) օրացուցային օր առաջ: Եթե անհրաժեշտ է, տարանցման դիմումը պետք է պարունակի Համաձայնագրի 8(2) հոդվածով սահմանված տեղեկատվությունը: Այս տեղեկատվությունը պետք է մուտքագրվի տարանցման դիմումի «Գ» մասում:

Հոդված 7

Սխալմամբ կատարված հետընդունում

1. Սխալմամբ կատարված հետընդունման դեպքում Հայցող պետությունը հետ է ընդունում Հայցվող պետության կողմից հետ ընդունված անձին Համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված ժամկետում և պայմաններով:

2. Հայցվող պետությանը ներկայացված բոլոր փաստաթղթերը վերադարձվում են Հայցող պետությանը: Եթե տվյալների և փաստաթղթերի փոխանցումը կատարվել է էլեկտրոնային եղանակով, ապա Հայցվող պետությունը դրանք անմիջապես ջնջում է:

Հոդված 8

Ուղեկցումը

Անձանց հետընդունումը և ուղեկցմամբ տարանցումը կազավորվում են հետևյալ կանոններով.

- 1) Հայցող պետության իրավասու մարմինը պետք է, Հետընդունման դիմումի «գ» կետի կամ տարանցման դիմումի «Բ.4» կետի համաձայն, նշի ուղեկցողների կոչումները, անուն ազգանունները, ինչպես նաև նրանց ճամփորդական փաստաթղթերի սերիաները, համարները և տրամադրման ամսաթվերը.
- 2) Հայցող պետության իրավասու մարմինն առանց հետաձգման պետք է տեղեկացնի Հայցվող պետության իրավասու մարմնին սույն հոդվածի 1-ին ենթակետում նշված ուղեկցողների փոփոխությունների մասին.
- 3) ուղեկցողները կկատարեն իրենց պարտականությունները անզեն և քաղաքացիական հագուստով: Իրենց պարտականությունների կատարման ընթացքում ուղեկցողներն իրենց մոտ կունենան ճամփորդական փաստաթուղթ և Հայցվող պետության՝ ուղեկցվող անձի հետընդունմանը կամ տարանցմանը համաձայն լինելը հաստատող պաշտոնական փաստաթղթեր.
- 4) ուղեկցողները պատասխանատու են ուղեկցվող անձի և նրա՝ նպատակակետ երկիր փոխադրման համար.

- 5) ուղեկցողները պարտավոր են պատշաճ կերպով պահպանել ուղեկցվող անձի փոխադրման հիմք հանդիսացող փաստաթղթերը և դրանք տրամադրել ուղեկցվող անձի նպատակակետ երկրի իրավասու մարմիններին.
- 6) ուղեկցողները պարտավորված կլինեն հարգել Հայցվող պետության օրենսդրությունը: Անձին ուղեկցման ընթացքում ուղեկցողների իրավասությունները կսահմանափակվեն ինքնապաշտպանությամբ.
- 7) Հայցվող պետության իրավասու մարմիններն ապահովում են ուղեկցողների պաշտպանության ու աջակցության այն նույն մակարդակը, որը ներպետական օրենսդրությամբ ապահովում են նույնանման պարտականություններ կատարող Հայցվող երկրի քաղաքացիներին.
- 8) աջակցություն ցուցաբերելու լիազորություն ունեցող՝ Հայցվող պետության պաշտոնատար անձանց բացակայության դեպքում ուղեկցողն իրավասու է, ստեղծված հանգամանքներին համարժեք և Հայցվող պետության օրենսդրության համաձայն, ուղղակի հարկադրանքի միջոցներ ձեռնարկել, եթե առկա է անմիջական վտանգ, որ ուղեկցվող անձը կդիմի փախուստի, ինքն իրեն կամ երրորդ անձի վնաս կպատճառի կամ կվնասի գույք.
- 9) եթե պահանջվում է, ուղեկցողները պետք է ունենան տարանցման և նպատակակետ պետության մուտքի վիզաներ:

Հոդված 9

Դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից կատարվող գործողությունները

1. Համաձայնագրի 9(3) հոդվածի համաձայն՝ Հայցվող պետության դիվանագիտական առաքելության կամ հյուպատոսական հիմնարկի լիազորված ներկայացուցիչն անցկացնում է հարցազրույց Հայցող պետության իրավասու մարմնի հետ դեպք առ դեպք հիմքով՝ անհատականապես համաձայնեցված վայրում:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ներկայացուցիչը հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույց վարելիս թույլ է տալիս, որ մյուս Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչը ներկա լինի հարցազրույցին:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ներկայացուցիչը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցազրույցից հետո 3 օրացուցային օրվա ընթացքում, Համաձայնագրի 9(3) հոդվածով նախատեսված կարգով գրավոր տեղեկացնում է Հայցող և Հայցվող պետությունների իրավասու մարմիններին հարցազրույցի արդյունքների մասին՝ անձի քաղաքացիությունը հաստատելն անհնար լինելու դեպքում նշելով նման անհնարինության պատճառը:

Հոդված 10 Ծախսերը

1. Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հայցվող պետության կատարած տրանսպորտային ծախսերը՝ կապված հետընդունման կամ տարանցման հետ, պետք է փոխհատուցվեն Հայցող պետության կողմից՝ եվրոյով, Հայցվող պետության ներպետական օրենսդրության համաձայն կազմված՝ տվյալ ծախսերը մանրամասնող հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

2. Հայցվող պետության իրավասու մարմինը, ներկայացնելով սույն հոդվածի 1-ին կետում նշված համապատասխան հաշվապահական փաստաթղթերը, պետք է տրամադրի տեղեկատվություն բանկային հաշվի վերաբերյալ և ցանկացած հավելյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ծախսերի կարգավորման համար:

Հոդված 11 Փորձագետների հանդիպումները և խորհրդակցությունները

Կողմերի իրավասու մարմինները, փոխադարձ համաձայնությամբ, սույն Կիրարկող Արձանագրության կիրարկման հետ կապված հարցերի վերաբերյալ կարող են կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և փորձագիտական խորհրդակցություններ:

Հոդված 12 Հաղորդակցման լեզուն

Եթե Կողմերի իրավասու մարմիններն այլ որոշում չկայացնեն, այդ մարմինների ուղիղ գրավոր հաղորդակցություններն ու խորհրդակցությունները, ինչպես նաև փորձագիտական խորհրդակցությունները կանցկացվեն անգլերեն:

Հոդված 13 Փոփոխությունները

Սույն Կիրարկող Արձանագրությունը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նման փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք կազմում են սույն Կիրարկող Արձանագրության բաղկացուցիչ մասը և ուժի մեջ են մտնում սույն Կիրարկող Արձանագրության 14-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 14
Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

1. Սույն Կիրարկող Արձանագրությունը կնքվում է անժամկետ, և դրա գործողությունը դադարում է Համաձայնագրի գործողության դադարելու օրը:

2. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր տեղեկացնում են սույն Կիրարկող Արձանագրության ուժի մեջ մտնելու համար պահանջվող բոլոր ներքին իրավական ընթացակարգերի կատարման մասին:

3. Լեհական կողմը տեղեկացնում է Եվրոպական հանձնաժողովին Կողմերի կողմից բոլոր ներքին իրավական ընթացակարգերի կատարման մասին և այդ մասին տեղյակ է պահում Հայկական կողմին: Սույն Կիրարկող Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն օրվան հաջորդող երեսուներորդ օրը, երբ Հայկական կողմն ստանում է ծանուցում Համաձայնագրի 20(2) հոդվածի համաձայն Հետընդունման հարցերով համատեղ Կոմիտեի ծանուցված լինելու մասին:


4. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Կիրարկող Արձանագրության գործողությունը՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցելով մյուս Կողմին: Այդ դեպքում սույն Կիրարկող Արձանագրության գործողությունը դադարում է նման գրավոր ծանուցում ստանալուց 180 օր հետո:

Կատարված է Վարչապետ քաղաքում 2021 թվականի 29 հուլիսի ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լեհերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



**Լեհաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



Մույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021թ. հոկտեմբերի 29-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝**



Վահագն Փիլիպոսյան
Վահագն Փիլիպոսյան